ԲՐՈՆԶԻ ԴԱՐԻ ԵՎ ՎԱՂ ԵՐԿԱԹԻ ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

(1966 թ. պեղումների արդյունքները)

Հրազդան գետի միջին հոսանքը հարուստ է բազմաթիվ պալեոլիթյան կայաններով, որտեղից հայտնաբերվել են հին քարի դարի տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող զանազան քարե գործիքների կուտակումներ։ Դա, հիմնականում, Արզնի առողջարանի տերիտորիան է, որտեղ Հրազդանի ձախ ափի 100 մ բարձունքի վրա գտնվում է 80 մ դարավանդը աշելյան գործիքների հարուստ կուտակումներով, այնուհետև Ճատկրան (2 կմ Արզնիից հյուսիս), Աշիրապատ (Ճատկրանից 2 կմ հյուսիս), Նուրնուս (Աշիրապատից 3 կմ դեպի հյուսիս) գյուղերի մոտ ընկած տարածությունը՝ երրորդական ժամանակաշրջանի պալեոնթոլոգիական նյութերով և, վերջապես, Արգել (այժմ Լուսակերտ, 10 կմ Արզնիից հյուսիս) ավանը՝ միջին և վերին պալեոլիթյան գործիքների կուտակումներով[1]։

Քարե գործիքները Արզնու դարավանդում առաջին անգամ հայտնաբերել է երկրաբան Ա. Պ. Դեմյոխինը 1933 թ., իսկ հետագայում այս և վերոհիշյալ շրջանները ուսումնասիրել են հնագետները[2]։ Սակայն պետք է նշել, որ հասարակության զարգացման հետագա ժամանակաշրջաններին վերաբերող հուշարձանների սիստեմատիկ ուսումնասիրություններ այստեղ չեն կատարվել։ Միաժամանակ հիշյալ շրջանում գտնվում են համեմատաբար ուշ շրջաններին պատկանող կարևորագույն հուշարձաններ, որոնց մասին նախնական հաղորդում է ներկա հոդվածը։

Դամբանադաշտ Լուսակերտի մոտ

Հուշարձանը գտնվում է Աշտարակի շրջ. Լուսակերտ ավանից (նախկին Արգել) 2 կմ դեպի հյուսիս և տեղադրված է Արզնիից դեպի Արզական տանող խճուղու երկու կողմում, Հրազդան գետի աջ բարձրադիր ափին։ Դամբանադաշտը զբաղեցնում է բավական մեծ հարթ տարածություն և փռվում է դեպի հարավ, գրավելով բարձունքի ստորոտի մի մասը։ Դամբարաններից 300 մ դեպի հյուսիս գտնվում է միջնաբերդը, որտեղ պահպանվել են նաև VII դ. եկեղեցու մնացորդները։ Միջնաբերդը գրավում է մոտ 16 հեկտար տարածություն և հզոր կիկլոպյան կառույց է, բավական լավ պահպանված պատերով, որոնք հարավային մասում հասնում են մինչև 10 մ բարձրության (նկ. 1)։ Ռնակավայրի ամբողջ տերիտորիայում պարզ երևում են բազմաթիվ կացարանների հետքեր, շատ դեպքերում պահպանված մուտքերով։ Հետևի երեսից հավաքած նյութը սև փայլեցրած խեցեղեն, բնորոշ պարուրաձև զարդերով գունազարդ կավանոթների բեկորներ, ուշ բրոնզեդարյան խեցի՝ փայլով արված նախշերով՝ հելլենիստական և միջնադարյան նյութական մշակույթի այս մնացորդները խոսում են այն մասին, որ կյանքը այստեղ շարունակվել է սկսած մ. թ. ա. III հազ. մինչև միջնադար։ Արտաքինից երևում է, որ դամբարանները, որոնք կազմում են դամբանադաշտը, բաժանվում են հետևյալ տեսակների՝ I խումբը կազմում են մեծ (մինչև 20 մ տրամագծով) և համեմատաբար փոքր (մինչև 10 մ տրամագծով) դամբանաբլուրներ, որոնք գետնի երեսից բարձր են մոտ 80 սմ և ունեն կլոր շարվածք, կազմված միջին չափսի բազալտե քարերից։ II խումբը մեծ և փոքր կրոմլեխներ են, որոնց մի մասի շրջանակները կազմված են ուղղահայաց տնկած սալերից։ 1966 թ. ձմեռվա ընթացքում պեղվել է 6 դամբարան, որոնք տարբերվում են իրարից ինչպես կառուցվածքային առանձնահատկություններով, այնպես էլ ժամանակաշրջանով ու պարունակած նյութով (պեղումներին մասնակցել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող Գ. Արեշյանը)։

Դամբարանների նկարագիրը և նյութի վերլուծումը

Դամբարան 1. դամբանաբլուր է, քարե կլոր շարվածքով։ Կենտրոնում երևում են ծածկի խոշոր սալերը։ Տեղադրված է մոտավորապես վերոհիշյալ դամբանադաշտի գրեթե կենտրոնում և գտնվում է մոտիկ դամբարաններից 7—15 մ հեռավորության վրա։ Չափսերը՝ 8,5×9,5, բարձրությունը՝ 40 սմ։ Դամբանափոսը քառանկյուն է։ Չափսերը՝ 2,5×90 սմ, խորությունը՝

---

[1] Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 14—24։ С. А. Сардарян, Палеолит в Армении, Ереван, 1954, էջ 92—100։

[2] С. Н. Замятнин, Находки нижнего палеолита в Армении, «Изв. АН Арм. ССР», 1947, I; М. З. Паничкина, Палеолит Армении, Л., 1950; С. А. Сардарян, նշվ. աշխ.։



Նկ. 1

2,35 մ, հիմնահողային է։ Ծածկասալերը տուֆից են, 1,40 մ երկարությամբ։ Նյութը ներկայացված է կավանոթներով, որոնք կենտրոնացված են դամբարանի հարավային մասում՝ մեծ, սև, կոպիտ երկկանթանի կճուճ, լայն հատակով. մեծ, սև, կոպիտ լայնաբերան կճուճ, խորադիր նախշով. փոքր, սև, կոպիտ կճուճ, իրանի վրա եղունգային զարդով (աղ. I, նկ. 10, 11, 6)։ Կմախքը վատ է պահպանված, գտնվում է ձախ կողքի վրա, կուչ եկած վիճակում, գլխով ուղղված դեպի հարավ։ Նկարագրված իրերը բնորոշ են երկաթի դարի լայն տարածման սկզբնական շրջանի համար (մ. թ. ա. X—IX դդ.) և հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի տերիտորիայի բազմաթիվ շրջաններից (Սևանի ավազան, Թեյշեբաինի միջնաբերդ և քաղաք, Գոլովինո, Դիլիջան, Երևան, Արթիկի III խմբի խեցեղենը, Լուգովոյե բնակավայրի ուշ շերտը)[3]։

Դամբարան 2. կրոմլեխ է, ցայտուն արտահայտված քարե կլոր շարվածքով։ Տրամագիծը՝ 3,10 մ, վերին շերտը բացելիս, մոտ 20 սմ խորության վրա բացվեց բազալտե սալերի երեք շերտ, 7—20 սմ հաստությամբ, անկանոն ձևի, միմյանց կպած։ Դամբարանում, որը աչքի է ընկնում ինքնատիպ կառուցվածքով, բացակայում էին իրերը և կմախքը։ Դամբանափոսը հիմնահողային է։ Մայր հողը երևաց 2,10 մ խորության վրա։ Մեզ թվում է, որ հիշյալ դամբարանը կենոտաֆ-գերեզման է (могила-кенотаф), որ պատկանում է հնագույն մարդու հոգեվոր կյանքի ոչ լրիվ լուսաբանված հարցերին։ Նման հուշարձաններ կան Գատին-Կալեի դամբանադաշտում, Չեչենո-Ինգուշեթիայում (Հյուս. Կովկաս)[4]։

Դամբարան 3. կրոմլեխ է, քարե կլոր շրջանակով, 3,40 մ տրամագծով։ 20 սմ խորության վրա, ծածկասալերի վրա հայտնաբերվեցին սև փայլեցրած խեցեղենի իրանի և շրթի բեկորներ, խորադիր ալիքաձև զարդերով, որոնք բնորոշ են մ. թ. ա. II հազ. վերջի, I հազ. սկզբի ժամանակաշրջանի համար։ Դամբարանը հիմնահողային է։ Մայր հողը երևաց 1,6 մ խորության վրա։ Բուն դամբանափոսի մեջ իրերը և մարդկային կմախքը բացակայում էին։

---

3 Ե. Լալայան, Դամբանների պեղումները խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։ Б. Б. Пиотровский, Кармир-Блур, т. т. 1, 2, 3, Ереван, 1950, 1952, 1955; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 193—231, Լ. Լ. Կարապետյան, Ա. Ն. Շահինյան, Հնագիտական հայտնագործություններ Դիլիջանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1960, № 1։ Ս. Եսայան, Լ. Կարապետյան, Նորահայտ դամբանադաշտ Երևանի մոտ, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, աղ. 2։ Թ. Ս. Խաչատրյանի պեղումները 1962 թ.։ Р. М. Мунчаев, Луговой могильник, сб. «Древности Чечено-Ингушетии», М., 1963, էջ 139—211, աղ. 5, 4։

4 В. И. Марковин, Новый памятник эпохи бронзы в горной Чечне, сб «Древности Чечено-Ингушетии», էջ 49—135։



Чертеж I

Դամբարան 4. փոքր կրոմլեխ է, գտնվում է դամբարան 1-ից 50 մ դեպի հարավ։ Արտաքինից քիչ ձվաձև է, շրջանակի քարերը խոշոր և միջին չափսի բազալտե սալեր են, խիտ դասավորված և ուղղահայաց դրված գետնի մեջ։ 20—25 սմ խորության վրա բացվեցին մարդու կըմախքի մնացորդները և զանազան կավանոթների բեկորներ, որոնք, անշուշտ, հետաքրքրություն են ներկայացնում և ունեն կարևոր նշանակություն բրոնզի դարի որոշակի փուլի ժամանակագրման հարցում։ Դրանք են՝ գունազարդ մոնոխրոմ, բարակ պատերով խոր թասը, Թազաքենդի և Լճաշենի կավանոթների ձևի[5], զարդարված կարմիր ֆոնի վրա սև ներկով, շրթի տակ՝ «կրկնակի սակրերով» («двойные секиры») և թեք ցանցով՝ իրանի վրա (աղ. I, նկ. 1)։ Հետաքրքիրն այն է, որ վերոհիշյալ կավանոթը գտնվել է համեմատաբար քիչ տարածում ունեցող սև փայլեցրած խեցեղենի հետ, որը կրում է պարուրաձև ֆիգուրներ և հորիզոնական գծեր՝ կազմված մի շարք կետերից և արված բարդ տեխնիկայով՝ ատամնավոր «քայլող» շտամպով (зубчатый «шагающий» штамп, աղ. I, նկ. 2, 3)։ Պատրաստման տեխնիկայով և զարդանախշերով նկարագրված խեցեղենը հիշեցնում է, նախ և առաջ, Ուզերլիք-թեփեի (Միլի տափաստան, Ադրբեջան) II խմբի հոյակապ արտադրանքը, որը հանդիպել է մշակութային շերտում նույնպես գունազարդ մոնոխրոմ ու կարմիր անգոբով խեցու հետ միասին և թվագրվում է մ. թ. ա. II հազ. երկրորդ քառորդով[6]։

Բանն այն է, որ Ուզերլիք-թեփեի այս խեցեղենը փոխարինում է խորագիր զարդանախշ կրող կավանոթներին և ձևերի առանձնահատկություններով հիշեցնում է էնեոլիթյան նախատիպերը, որը ավելի է ճշտում նրա ժամանակագրումը։

Հայաստանի տերիտորիայի վրա նման արտադրանք հայտնի է դեռ Մուխանաթ-թափայի[7] պեղումներից և Թազաքենդի դամբանադաշտից[8]. Կիրովականի դամբարանների պեղումներից, Ցամաքաբերդից, Այրիվանքից, Գառնիից, ինչպես նաև 1956 թ. Սևանի հիդրոկայանի շինարարության ժամանակ պատահաբար բացված հիմնահողային դամբարանից[9], որոնք արտաքին առանձնահատկություններով և զարդանախշերով համապատասխանում են Ապարանի նյութերին (թաս, կճուճ կորագծերով)[10]։ Վերջերս այս հետաքրքիր նյութը լրացվել է նաև Հառիճի (Արթիկի շրջ.) հետաքրքիր բնակավայրի պեղումներից հայտնաբերված նյութերով[11], ինչպես նաև Վերին Ջեյթունում պատահական պեղումներից հայտնաբերված իրերով[12]։

Այս կապակցությամբ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենի դամբարանների պեղումները հարուստ թաղումներով, որտեղից հայտնաբերվել են վերոհիշյալ արտադրանքի հոյակապ նմուշներ։ Այս կավամանները նույնպես հանդիպում են գունազարդ խեցեղենի հետ, սակայն տարբերվում են պատրաստման բարձր տեխնիկայով։ Այստեղ գերակշռող զարդանախշերն են պարույրները, եռանկյունիները, ուղիղ և կոր գծիկները և այլն, կատարված կետազարդ տեխնիկայով[13] Նման նյութ հայտնի է նաև Օշականի դամբարանների պեղումներից, որը, սակայն, տարբերվում է ավելի հասարակ զարդանախշերով[14] Այդ ինքնատիպ արտադրանքի զուգահեռները կարելի է նշել նաև Վրաստանում՝ Թռեղքի (Թրիալեթ) մեծ դամբանաբլուրներում, Սամթավրոյում (№ 55 դամբ.), Հարավային Օսեթիայում (Պրինևի, Նուլի, Կվասաթալի)[15]։

---

5 Տե՛ս К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, СА, 1960, № 1։ Լճաշենի գունազարդ խեցեղենը պահվում է պետ. պատմ. թանգարանում, գույք № 2118/145—146։

6 К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе около Агдама, «Труды Азербайджанской Археологической экспедиции», т. 2, М.—Л., 1965, էջ 74—102։

7 Հայաստանի պետ. պատմ. թանգարան, գույք № 1440/87։

8 К. Х. Кушнарева, Тазакендский могильник..., էջ 141, նկ. 3։

9 Հայաստանի պետ. պատմ. թանգարան, գույք № 1236/62, 1941/70, 1955/225, 1985/3—8։

10 Т. С. Хачатрян, С. А. Есаян, Археологические находки в с. Апаран, СА, 1958, № 4, էջ 197, նկ. 1, 1։

11 Թ. Ս. Խաչատրյանի պեղումները։

12 Դամբարանը, որը պարունակում էր նաև գունազարդ խեցի, ուսումնասիրել ենք Թ. Խաչատրյանի հետ։

13 Լճաշենի № 35, 36, 37, 38, 39, 40, 41, 45, 50 և այլ դամբարաններ։ Պետ. պատմ. թանգարան, գույք № 2118։

14 Ս. Սարգարյանի պեղումները Օշականում։ Նյութերը հրատարակված չեն։ Պետ. պատմ. թանգարան, գույք № 2073։

15 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, т. I, табл. 23—24; О. М. Джапаридзе, Квасатальский могильник эпохи бронзы в Юго-Осетии. КСИИМК, вып. 60, 1955, էջ 27։

Պետք է նշել, որ վերոհիշյալ խեցեղենը բավական ինքնատիպ է ու բնորոշ բրոնզի դարի որոշակի ժամանակաշրջանի համար և, բացառությամբ սև փայլեցրած մակերևսի, քիչ նմանություն ունի ուշ բրոնզի դարի արտադրանքի հետ (Լճաշեն, Արթիկ, Ղարաբաղի հարևան հուշարձանները, Խանլար, Մինգեչաուր և այլն)։ Ինչ վերաբերում է նրա դերին, ապա, ըստ երևույթին, այդ շքեղ խեցեղենը ունեցել է զեղարվեստական նշանակություն, որը և վկայում է հնագույն մարդկանց բարձր գեղագիտական ճաշակի մասին։ Բոլոր թվարկած դեպքերում այս կավանոթները գտնվում են զունազարդ խեցեղենի հետ միասին, որը խոսում է նրանց համագոյակցության մասին, ուստի դրանք փոխադարձաբար թվագրում են իրար։ Մեզ թվում է, որ Լուսակերտի արտադրանքը, որը նման է մշակութային շերտում հանդիպած Ուզերլիք-Թեփեի խեցեղենին, նույնպես պետք է թվագրել մոտավորապես մ. թ. ա. II հազ. երկրորդ քառորդով։

Դամբարան 5. կրոմլեխ է, միջին չափսի քարերից կազմված շրջանակով։ Տրամագիծը՝ 4,10 մ, 15 սմ խորության վրա բացվեցին վատ պահպանված երկու մարդկային կմախք, որոնց դիրքը դժվար է որոշել, սակայն, հավանաբար, սրանք թաղված են եղել ուղղահայաց շրջանակի հյուսիս և հյուսիս-արևմտյան մասում։ Կմախքների մոտ գտնվեցին երկու կավանոթների բեկորների կուտակումներ. անոթներից մեկը զընդաձև իրանով, սև փայլեցրած փոքր կճուճ է, իրանի վրա թեք խորադիր ուղղահայաց գծիկներով (աղ. I, նկ. 9), մյուսը՝ սև, լավ փայլով կճուճ է, բարդ զարդանախշով, որ ներկայացնում է մեկը մյուսի մեջ անցկացված անկյուններ, որոնցից կախված են կամարաձև ֆիգուրներ և կետազարդ ծաղկեշղթայի տեսքի նախշեր (աղ. I, նկ. 8)։ Այս մոտիվը հիշեցնում է Թելլերաինի քաղաքի բնակելի թաղամասերից գտնված խեցեղենի զարդը։ Քարե գործիքները ներկայացված են ծեծիչով։ Ինքնատիպ և հաղվագյուտ է դամբարանի կառուցվածքային առանձնահատկությունը՝ թաղումը կատարված է թեքություն ունեցող երկու բազալտե սալերի վրա։

Դամբարան 6. դամբանաբլուր է, քարե կույտով և փոքր քարերից կազմված շրջանակով։ Տրամագիծը՝ 6,50 մ։ Դամբանափոսը ծածկված է չորս խոշոր սալերով և ունի ուղղանկյան ձև։ Հիմնահողային է և լցված է հողով ու մանր քարերով։ Դամբանափոսի չափսերն են՝ խոր.՝ 3,25 մ, երկար.՝ 2 մ, լայն.՝ 1,15 մ, շրջանակի տրամագիծը՝ 6,50 մ։ Նյութը ներկայացված է հիմնականում խեցեղենով՝ սև, կոպիտ, լայնաբերան կճուճով, բնորոշ երկշարք եղունգային զարդով, շաղանակագույն փոքր կավանոթի բեկորով, նույնատիպ զարդամոտիվով և մի շարք այլ բեկորներով։ Ուշադրության են արժանի սև, լավ փայլեցրած կճուճների շրթի և իրանի բեկորները, որոնք կրում են փայլով արված ուղղահայաց գծիկներ ու ցանց՝ վզի և ուսերի վրա, և բնորոշ են ուշ բրոնզեդարյան (մ. թ. ա. XIII—XI դդ.) ժամանակաշրջանի համար (աղ. I, նկ. 4, 5), ինչպես նաև սև փայլով, նեղ վզիկով ամբողջական կճուճը, երկշարք խորադիր հորիզոնական գծերով՝ ուսերի վրա (աղ. I, նկ. 7)։ Նշված արտադրանքը նոր ներդրում է ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի համար (զարդամոտիվներով), թեև պահպանել է հիմնական ավանդական ձևերը։ Նա հայտնի է Հայաստանի այնպիսի հուշարձանների պեղումներից, ինչպիսիք են Թազաբենդը, Գեղարոտը, Ջեյվան, Երևանը[16] և այլն։ Վերջին ժամանակի ինտենսիվ հնագիտական աշխատանքների շնորհիվ հայտնի են դառնում նաև բրոնզեդարյան հուշարձաններ, որոնք այսօր լրացվում են Լուսակերտի նյութերով։ Այդպիսի հուշարձանների շարքին են պատկանում նաև Լճաշենի և Արթիկի հարուստ դամբարանները, որոնք տվել են նշված արտադրանքի հիմնական մասը։ Նկարագրված խեցեղենը բնորոշ է նաև Վրաստանի և Ադրբեջանի բրոնզի ժամանակաշրջանի համար, որի լայն տարածումը վկայում է ցեղերի միջև եղած սերտ կապերի մասին և փաստագրում մշակույթի ընդհանրությունը լայն տերիտորիայի վրա։ Մետաղյա առարկաները ներկայացված են բրոնզե խոշոր քորոցով (աղ. I, նկ. 12), վերին մասում չորս հորիզոնական կոճակաձև և մեկ ուղղահայաց ելուստներով։ Գլխիկի հիմքը տափակ է և ծակված։ Նման և այլ տիպի քորոցներ մեծ քանակությամբ հանդիպում են ճիշտ թվագրված Արթիկի կոմպլեքսներում[17]։ Չնայած պեղված դամբարանների համեմատաբար քիչ քանակությանը, Լուսակերտի դամբարանադաշտը հանդիսանում է նոր և, անշուշտ, կարևոր հուշարձան ոչ միայն Հրազդան գետի ավազանի, այլև Անդրկովկասի բրոնզի դարի և վաղ երկաթի ժամանակաշրջանը ուսումնասիրելու համար։ Նրա հետաքրքրականությունը ուժեղանում է նաև նրանով, որ առայժմ սա միակ խոշոր հուշարձանն է, բացված Հրազդան գետի միջին հոսանքում։ Լուսակերտի հուշարձանը այնքան էլ հեռու չէ Սևանի ավազանից, որը հարուստ է մարդկային հասարակության զարգացման բոլոր ժամանակաշրջանները ընդգրկող հուշարձաններով։ Լուսակերտի դամբարանների նյութերի (զունազարդ և սև կետազարդ ու փայլով արված զարդանախշե-

16 Ս. Սարգսյան, Լ. Կարապետյան, նշվ. հոդվ., աղ. II։

17 Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 79, աղ. 6, նկ. 1—6։

րով խեցեղենը) համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ըմբռնելու հին ցեղերի միջև եղած փոխհարաբերությունները։ Ավելի խոր ուսումնասիրություն են պահանջում որոշ դամբարանների (կրոմլեխներ) կառուցվածքային առանձնահատկությունները։

Լուսակերտի դամբանադաշտի և բնակավայրի հետագա ուսումնասիրությունը թույլ կտա կոնկրետ և լրիվ լուսաբանել բազմաթիվ հարցեր, որոնք չէին կարող շոշափվել տվյալ հաղորդման մեջ (տնտեսական գործունեություն, արվեստ և այլն)։

Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

СЕРЕБРЯНЫЙ КРЕСТ ИЗ ЗАГОРСКА С АРМЯНСКИМИ НАДПИСЯМИ

Среди произведений прикладного искусства, хранящихся в Загорском историко-художественном музее-заповеднике, привлекает внимание серебряный, золоченый на оба лица напрестольный крест с серебряной граненой рукоятью (рис. 1)[1]. Крест четырехконечный, со скругленными концами, пустотелый. На лицевой стороне его—накладная фигурка распятого Христа, над нею — надпись под титлами, вырезанная армянскими буквами: ՏՐ ԱՍ, ՅՍ ՔՍ[2].

Под руками Христа и внизу, над рукоятью, резаны изображения трех мужских голов. По концам креста — высокие прямоугольные и круглые касты с зелеными стеклами и бледными камнями (альмандинами?). На обороте (рис. 2) — надпись на армянском языке, резанная в две строки:

ԵՍ, ՍԱՐԿԱԻԱՔ, ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՆՈՐՈԳԵԼ,
ՏՈՒԻ, ԽԱՉՍ,

ԱՍ ՈՂՈՐՄԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՑ, Թ, Վ, Ռ, Կ, Թ,
ԱՄԵՆ[3],

Происхождение описанного памятника, когда и при каких обстоятельствах попал он в собрание Троице-Сергиевой Лавры — неизвестно. В 1908 г. под № 2 он был включен в рукописную музейную опись, а в 1921 г.— в печатную опись, составленную Ю. А. Олсуфьевым[4]. В научной литературе никаких упоминаний о нем не имеется.

В описи 1921 г. интересующий нас памятник фигурирует первым в разделе самых ранних крестов — до XV в. Составитель руководствовался, вероятно, датой, названной в надписи о поновлении креста в описи 1908 г.; она выглядит следующим образом: «Я, протодьякон монах, обновил сей крест, и да помянет господь всех сотрудников 1259 года»[5].

Однако при внимательном изучении памятника приходишь к выводу, что дата эта вряд ли может быть правдоподобной.

При всем разнообразии форм крестов XII—XIII вв. (не только, кстати, напрестольных) загорский памятник не находит себе прямых аналогий среди ранних произведений этого рода.

Что касается накладной фигурки Христа на нашем памятнике, как и резаных на нем голов, то особенности трактовки всех этих изображений также указывают на время более позднее, чем приводимое у Ю. А. Олсуфьева. Исполненные небрежно, с «большим нажимом» резные изображения трех голов с длинными усами и растущей лишь с правой стороны окладистой бородой[6], как и анатомические погрешности в трактовке скульптурного изображения Христа (пропорциональное несоответствие между отдельными частями корпуса распятого; крупная голова; очень длинные и тонкие руки и т. д.), сухость и схематизм в разработке складок его препоясания и т. п., равно как и замена традиционного крещатого нимба у Спасителя терновым венцом (сильно потерт),— все это говорит о времени значительно более позднем, чем середина XIII столетия.

---

[1] Инв. № 5101. Размеры: выс.—23,5 см (с рукоятью—32 см), длина горизонтальной перекладины—14,5 см, от верха креста до перекладины—8,9 см, ширина перекладин у их скрещивания—2,8 см, толщина—0,8 см. Сохранность хорошая.

[2] В раскрытом виде — «Տէր Յիսուսն Քրիստոս», означающая в переводе: «Господь Бог Иисус Христос».

[3] По описи 1921 г.

[4] Ю. Олсуфьев. Опись крестов Троице-Сергиевой Лавры до XIX века и наиболее типичных XX века, Сергиев, 1921, стр. 1—2.

[5] Там же, стр. 2.

[6] Пока мы затрудняемся дать убедительное во всех отношениях истолкование этих изображений.